# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 111- Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 34-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 34-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 32-րդ տողի 2-րդ սյունակի «8» թիվը փոխարինել «12» թվով և 6-րդ սյունակի «500000» թիվը փոխարինել «800 000» թվով,
2) 44-րդ տողի 2-րդ սյունակի «11» թիվը փոխարինել «12» թվով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան

Ա.Ադամյան

Լ.Խաչատրյան

Տ.Հովհաննիսյան

Մ. Սահակյան

Լ.Սանոյան

Վ. Եղիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան ______________

Կ. Միքայելյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Աղանյան ______________

Ռ.Սարգսյան ______________

Ա.Մխիթարյան ______________

Ս. Մարտիրոսյան ______________

Լ. Բարսեղյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Գ.Մաթևոսյան ______________

Հ.Պողոսյան ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք. Գյումրի
«14» մայիսի 2021 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 112- Ա**

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ՀԱԿՈԲԻ ՂԱՐԱՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ 50/8 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով, որ քաղաքացի Արտյոմ Հակոբի Ղարաղազարյանին կառուցապատման իրավունքով տրամադրված Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի 50/8 հասցեում գտնվող հողամասը չի օգտագործվում ըստ նպատակային նշանակության, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 06-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության մասին» թիվ 968-Ա որոշումը՝ չի տրվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար կառուցապատման թույլտվություն, գրանցված իրավունքը դադարեցվել է, իսկ կառուցապատման իրավունքի գրանցման վկայականը՝ չեղարկվել, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արտյոմ Հակոբի Ղարաղազարյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2019 թվականի մարտի 13-ին N 3745 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ներել Գյումրի համայնքի բնակիչ Արտյոմ Հակոբի Ղարաղազարյանին 06.12.2011 թվականի թիվ 10274 կառուցապատման պայմանագրի հիման վրա տրամադրված Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի 50/8 հասցեի 0.002 (զրո ամբողջ երկու հազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի 17.04.2019 թվականի դրությամբ հաշվարկված 2 868 141 (երկու միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար մեկ հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարի պարտքը, որից 625 559 (վեց հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամը ապառքն է և 1 617 023 (մեկ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ տույժի գումարը:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի մասով կատարել վերահաշվարկ՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Հակոբի Ղարաղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան

Ա.Ադամյան

Լ.Խաչատրյան

Տ.Հովհաննիսյան

Մ. Սահակյան

Լ.Սանոյան

Վ. Եդիգարյան

Ա. Գրիգորյան

Վ. Հունանյան

Գ. Սարգսյան

Կ. Միքայելյան

Գ. Գրիգորյան

Ա. Տոնոյան

Ս. Աստոյան

Ա. Աղանյան

Ռ.Սարգսյան

Ա.Մխիթարյան

Ս. Մարտիրոսյան

Լ. Բարսեղյան

Ա. Գրիգորյան

Ա. Խաչատրյան

Գ.Մաթևոսյան

Հ.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք. Գյումրի

«14» մայիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 113- Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գլխավոր քարտուղար Արամ Մկրտչյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2021 թվականի մայիսի 10-ին N 8028 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կիրառել արտոնություններ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կառուցման շինարարության թույլտվության 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրքի և 5408988 (հինգ միլիոն չորս հարյուր ութ հազար ինը հարյուր ութանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական վճարի նկատմամբ:
2. Կառուցապատողին ազատել սույն որոշման 1-ին կետում նշված շինարարության թույլտվության տեղական տուրքի և վճարի վճարումներից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատողին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ________________

Ա.Ադամյան ________________

Լ.Խաչատրյան ________________

Տ.Հովհաննիսյան ________________

Մ. Սահակյան ________________

Լ.Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ.Սարգսյան ____________

Ա.Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ.Մաթևոսյան ____________

Հ.Պողոսյան ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 114- Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է .**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ______

Ա.Ադամյան ______

Լ.Խաչատրյան ______

Տ.Հովհաննիսյան ______

Մ. Սահակյան ______

Լ.Սանոյան ______

Վ. Եդիգարյան ______

Ա. Գրիգորյան ______

Վ. Հունանյան ______

Գ. Սարգսյան ______

Կ. Միքայելյան ______

Գ. Գրիգորյան ________________

Ա. Տոնոյան ________________

Ս. Աստոյան ________________

Ա. Աղանյան ________________

Ռ.Սարգսյան ________________

Ա.Մխիթարյան ________________

Ս. Մարտիրոսյան ________________

Լ. Բարսեղյան ________________

Ա. Գրիգորյան ________________

Ա. Խաչատրյան ________________

Հ.Պողոսյան ________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 14-ի
N 114-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու մեկնարկային գների և պայմանների

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ | Ծածկագիրը մակերեսը քառ.մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 16/5 13-րդ գոտի | 08-001-0128-0031 32.64 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | ավտոտնակի կառուցում | 100 000 |
| 2. | Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 16/6 13-րդ գոտի | 08-001-0128-0032 32.64 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | ավտոտնակի կառուցում | 100 000 |
| 3. | Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 16/7 13-րդ գոտի | 08-001-0128-0034 32.64 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | ավտոտնակի կառուցում | 100 000 |
| 4. | Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 16/8 13-րդ գոտի | 08-001-0128-0035 32.64 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | ավտոտնակի կառուցում | 100 000 |
| 5. | Մուշ-2 թաղամաս 5-րդ փողոց N 16/9 13-րդ գոտի | 08-001-0128-0033 32.64 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | ավտոտնակի կառուցում | 100 000 |
| 6. | Մուշ-2 թաղամաս 7-րդ փողոց N 2/2 12-րդ գոտի | 08-001-0083-0231 213.0 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 700 000 |
| 7. | Շիրակացու փողոց N 6/3 11-րդ գոտի | 08-001-0185-0088 36.0 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | ավտոտնակի կառուցում | 170 000 |
| 8. | Թբլիսյան խճուղի N 1/27 11-րդ գոտի | 08-001-1210-0117 110.5 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 600 000 |
| 9. | Մ.Խորենացու փողոց N 66/1 12-րդ գոտի | 08-001-0119-0029 2004.09 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 5 850 000 |
| 10. | Վիեննայի փողոց N 7/1 10-րդ գոտի | 08-001-0086-0042 488.45 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան կառուցում | 3 510 000 |
| 11. | Վիեննայի փողոց N 7/2 10-րդ գոտի | 08-001-0086-0043 488.45 | Բնակավայրերի բնակելի կառուցապատում | Բնակելի տան կառուցում | 3 510 000 |
| 12. | Կ.Խաչալաբյան փողոց N 1/3 12-րդ գոտի | 08-001-0129-0006 1504.45 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում | Սպասարկման օբյեկտի կառուցում | 4 740 000 |

Քաղաքաշինության և ճարտարապետության
բաժնի պետ՝ Ա.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » մայիսի 2021 թվականի N 115- Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (22)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ______________

Ա.Ադամյան ______________

Լ.Խաչատրյան ______________

Տ.Հովհաննիսյան ______________

Մ. Սահակյան ______________

Լ.Սանոյան ______________

Վ. Եդիգարյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Վ. Հունանյան ______________

Գ. Սարգսյան ______________

Կ. Միքայելյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Աղանյան ______________

Ռ.Սարգսյան ______________

Ա.Մխիթարյան ______________

Ս. Մարտիրոսյան ______________

Լ. Բարսեղյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Հ.Պողոսյան ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2021թվականի մայիսի 14-ի
N 115-Ն որոշման

# ԿԱՆՈՆՆԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## I. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կանոնի օգտագործվող հանրային սննդի ծառայության հիմնական հասկացություններն են՝

***հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)*** խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

***հանրային սննդի ծառայություն***՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

***խոհարարական արփադրանք***՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

***ճաշացուցակ***՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

***հանրային սննդի օբյեկտներ***՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

***վաճառող***՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

## II.ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

2. Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

3. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահոված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

4.Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

## III.ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏԻ ՎԱՃԱՌՈՂԻՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Վաճառողը պարտավոր է ապահովել սույն կանոնի II-րդ բաժնի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, մասերով նախատեսված դրույթների պահանջների կատարումը:

2. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

3. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

4. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ վկայականի համարի նշմամբ: Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

5. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

## IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Գյումրի համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) տալու կարգը:
2. Թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:
4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:
6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո մինչև 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը, որը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):
7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 116- Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանել 23:00-ից մինչև 7:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա.Ադամյան ____________

Լ.Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ.Սանոյան ____________

Վ. Եղիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ______

Կ. Միքայելյան ______

Գ. Գրիգորյան ______

Ա. Տոնոյան ______

Ս. Աստոյան ______

Ա. Աղանյան ______

Ռ.Սարգսյան ______

Ա.Մխիթարյան ______

Ս. Մարտիրոսյան ______

Լ. Բարսեղյան ______

Ա. Գրիգորյան ______

Ա. Խաչատրյան ______

Գ.Մաթևոսյան ______

Հ.Պողոսյան ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 117- Ն**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետով և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 100 մետր հեռավորության վրա:

2. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող անհատական բնակելի տների և (կամ) հանրային սննդի օբյեկտների և (կամ) հյուրանոցների միջև սույն որոշման 1-ին կետով սահմանված հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա.Ադամյան ____________

Լ.Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ.Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ.Սարգսյան ____________

Ա.Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ.Մաթևոսյան ____________

Հ.Պողոսյան ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 118- Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարում են էլեկտրոնային եղանակով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ________

Ա.Ադամյան ________

Լ.Խաչատրյան ________

Տ.Հովհաննիսյան ________

Մ. Սահակյան ________

Լ.Սանոյան ________

Վ. Եդիգարյան ________

Ա. Գրիգորյան ________

Վ. Հունանյան ________

Գ. Սարգսյան ________

Կ. Միքայելյան ______________

Գ. Գրիգորյան ______________

Ա. Տոնոյան ______________

Ս. Աստոյան ______________

Ա. Աղանյան ______________

Ռ.Սարգսյան ______________

Ա.Մխիթարյան ______________

Ս. Մարտիրոսյան ______________

Լ. Բարսեղյան ______________

Ա. Գրիգորյան ______________

Ա. Խաչատրյան ______________

Գ.Մաթևոսյան ______________

Հ.Պողոսյան ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 119- Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԵՎԳԻՆԵ ՌՈԲԵՐՏԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Եվգինե Ռոբերտի Գալոյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող (հիմք՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N HB958589) «ՌԵՆՋ ՌՈՎԵՐ 4.6 ԷՋԷՍԻ» (RENGE ROVER 4.6 HSE) մակնիշի 35 AX 160 հաշվառման համարանիշով (հիմք՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N HG229110) տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) 2021 թվականի մայիսի 14-ի դրությամբ գույքահարկի 2020-2021 թվականների մայր գումարների և տույժի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է Եվգինե Ռոբերտի Գալոյանին, ով 2019 թվականի դեկտեմբերի 27-ին նշված տրանսպորտային միջոցով մեկնել է Ռուսաստանի դաշնություն: 2020 թվականի հունվար ամսին Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս խափանվել է տրանսպորտային միջոցի շարժիչը և փոխանցման տուփը, որի պատճառով այն մինչ օրս մնացել է ավտոկայանատեղիում և ենթակա է խոտանման: Կորոնավիրուսի համաճարակի պատճառով հնարավոր չի եղել մեկնել Ռուսաստանի Դաշնություն և ավտոկայանատեղի վարձավճարի դիմաց ավտոկայանատեղի տիրոջն է հանձնվել տրանսպորտային միջոցը (հիմք՝լիազորագիրը՝ տրված երկու հազար քսանմեկ թվականի փետրվարի տասնյոթին Եվգինե Գալոյանի կողմից, ում անունից հանդես է գալիս Նիկիտա Յուրիի Կուրայեվը):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Եվգինե Ռոբերտի Գալոյանի (հաշվառված՝ քաղաք ԳյումրիՍայաթ-Նովա փողոց 5ա շենք, բնակարան 11 հասցեում, անձնագիր N AR 0548311, տրված՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ին, ոստիկանության 001-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ5103630249) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2021 թվականի մարտի 29-ին N5654 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Եվգինե Ռոբերտի Գալոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2020-2021 թվականների մայր գումարների և տույժի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդհանուր 105 452 (մեկ հարյուր հինգ հազար չորս հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից 2020 թվականի մայր գումարը կազմում է 71100 (յոթանասունմեկ հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայիս ամիսը ներառյալ մայր գումարը կազմում է 29688 (քսանինը հազար վեց հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 100788 (մեկ հարյուր հազար յոթ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայիսի 14-ի դրությամբ 2020 թվականի տույժը կազմում է 4664 (չորս հազար վեց հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եվգինե Ռոբերտի Գալոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան

Ա.Ադամյան _______________

Լ.Խաչատրյան _______________

Տ.Հովհաննիսյան _______________

Մ. Սահակյան _______________

Լ.Սանոյան _______________

Վ. Եդիգարյան _______________

Ա. Գրիգորյան _______________

Վ. Հունանյան _______________

Գ. Սարգսյան _______________

Կ. Միքայելյան _______________

Գ. Գրիգորյան _______________

Ա. Տոնոյան _______________

Ս. Աստոյան _______________

Ա. Աղանյան _______________

Ռ.Սարգսյան _______________

Ա.Մխիթարյան _______________

Ս. Մարտիրոսյան _______________

Լ. Բարսեղյան _______________

Ա. Գրիգորյան _______________

Ա. Խաչատրյան _______________

Գ.Մաթևոսյան _______________

Հ.Պողոսյան _______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք. Գյումրի
«14» մայիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 120- Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՈՒՇ ԷԴՎԱՐԴԻ ՄԱՐԱՆՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արտուշ Էդվարդի Մարանջյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՆԵՈՊԼԱՆ ԷՆ216 ԷՍԷՋԴԻ» (NEOPLAN N216 SHD) մակնիշի, 77DD788 հաշվառման համարանիշով (հիմք՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N HG229110) տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2017-2021 թվականների մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է Արտուշ Էդվարդի Մարանջյանին, ում որդին մասնակցել է 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմին և զոհվել է 2020 թվականի հոկտեմբերի 10-ին մարտական գործողությունների ժամանակ (հիմք՝ ԲԱ 308567 մահվան մասին պետական վկայականի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու մասին N 36/1891 տեղեկանքի պատճենները): Տրանսպորտային միջոցը երկար ժամանակ չի շահագործվել երկրում տիրող կորոնավիրուսային համաճարակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արտուշ Էդվարդի Մարանջանյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Ղանդիլյան փողոց 11Ա շենք, բնակարան 35 հասցեում, նույնականացման քարտ 004928222, տրված՝ 2014 թվականի հուլիսի 31-ին, ոստիկանության 010-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ1204740410) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2021 թվականի ապրիլի 27-ին N 7170թվագրմամբ)՝ **Գյումրիհամայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Արտուշ Էդվարդի Մարանջյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2017-2021 թվականների մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդհանուր 133 678 (մեկ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից 2017-2020 թվականների մայր գումարը կազմում է 87938 (ութսունյոթ հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայր գումարը կազմում է 22000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 109938 (մեկ հարյուր ինը հազարինը ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայիսի 14-ի դրությամբ 2017-2020 թվականների տույժերի գումարը կազմում է 23740 (քսաներեք հազար յոթ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտուշ Էդվարդի Մարանջյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան

Ա.Ադամյան ____________

Լ.Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ.Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ.Սարգսյան ____________

Ա.Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ.Մաթևոսյան ____________

Հ.Պողոսյան ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք. Գյումրի
«14» մայիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 121- Ա**

**ՌԱՖԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԵՂՈՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետ, Հայաստանի ճարտարապետների միության անդամ, 1964-1977 թթ. Գյումրի քաղաքի գլխավոր ճարտարապետ Ռաֆիկ Գարեգինի Եղոյանի համբավն ու հեղինակությունը, Գյումրու ճարտարապետական դիմագծի ձևավորման և զարգացման մեջ ներդրած մեծ ավանդը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 12-րդ կետի 26-րդ ենթակետի դրույթներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ռաֆիկ Գարեգինի Եղոյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է Ռաֆիկ Գարեգինի Եղոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա.Ադամյան ____________

Լ.Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ.Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ.Սարգսյան ____________

Ա.Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ.Մաթևոսյան ____________

Հ.Պողոսյան ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ք. Գյումրի
«14» մայիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**« 14 » մայիսի 2021 թվականի N 122- Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի հունիսի 15-ը՝ ժամը՝ $12^{00}$:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (23)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա.Ադամյան ____________

Լ.Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ.Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Վ. Հունանյան ____________

Գ. Սարգսյան ____________

Կ. Միքայելյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Ա. Տոնոյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Աղանյան ____________

Ռ.Սարգսյան ____________

Ա.Մխիթարյան ____________

Ս. Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ.Մաթևոսյան ____________

Հ.Պողոսյան ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**